



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍ ՔՍԱՆԵՐՈՐԳ

42 տար 1874



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե՝ ՄԻԻԷԼԷՆՏԻՍԱՆ

— 1874 —

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ԲԱՅՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՏ Ի.

12 ՄԱՐՏ 1871.

ՆՍԻՍՏԱՆ. — ՏԵՐԵՄԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ (Առժամանակեայ կարգեալ)

ԱՏԵՆԱՊԵՏ. — Գ. ՕՏԵԱՆ ԷՖԷՆՏԻ

ԿԱՐԳ ԽՆԴՐՈՅ

1. Ընդունելութիւն ատենագրութեանց ժ. է. ժ. Ե. և ժ. Գ. նիստերուն:
2. Վաւերացումն ընտրութեանց նոր երեսփոխանաց:
3. Ատենական կանոնագրութիւն:
4. Վերաքննութիւն Սահմանագրութեան:

Ժամը 7 ին ատենը բացվեցաւ ի ներկայութեան 36 երեսփոխանաց, որոց թիւը հետզհետէ 57 ի յանգեցաւ:

Բարձրաշնորհ Ս. Պատրիարքը կարեւոր գործի պատճառով ժողովէն բացակայ գտվելու պարտաւորեալ ըլլալը գրով յայտնած էր Գիւանին. ուստի Ատենապետ է. Ֆ. Նախ հրաւիրեց ներկայ Եպիսկոպոսաց մէջէն երիցագոյն ըզՏէր Յովհաննէս Սէթեան ժողովին նախագահելու, և ապա նորա հրաժարման վրայ հրաւիրեց ըզՏէր Երեմիա Եպիսկոպոս, որ ժողովոյն հաւանութեամբ նախագահեց այսօրեայ նիստին:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Օրվան խնդրոց չ'անցած կարեւոր կէտի մը վրայ ժողովին ուշադրութիւնը հրաւիրել պարտ կը համարիմ իրաւացի գանգատներ կը տեղան ամեն կողմէն Գիւանին, մանաւանդ նոյն իսկ երեսփոխաններէն գանգատներ կ'ըլլան պակասութեան մը համար. թերեւս առաջին յանցաւորը ձեր ատենապետն է, որ չը կրցաւ տակաւին ատենական կանոնագրութիւն մը ձեռքի ներկայացնել, ինչպէս որ խոստացած էր. յանցանքս խոստովանելով հան-

դերձ, չը կրցայ մինչեւ ցարդ ամբողջ ատենական կանոն մը խմբագրել, թէեւ մէկ քանի ծրագիրներ պատրաստ են արդէն բայց անոնք ժողովին բարեկարգութեան պիտոյքը գոհ ընելու բաւական չ'են. կարծեմ թէ մեծ օգուտ մը չը պիտի բերեն անոնք, չը պիտի կրնան երեսփոխանաց խօսելու ազատութիւնը օրինաւոր սահմանի մը տակ դնել. Ասկէ առաջ անգամ մը առիթ ունեցայ բացատրելու եւրոպական ազգաց կանոնները թէ իրենց խօսելու ազատութիւնը ինչպէս կը գործածեն. կարգէն դուրս խօսք ուղեւոր խնդիր յարուցիւողները պատճառ կ'ըլլան ժողովին անպէտ միճարանութիւններով զբաղելուն, և այս կերպով որոշում մը արվիլը խիստ կը դժարանայ: Անտարակոյս ժողովը իր որոշմանց մէջ կրնայ սխալիլ, բայց իր որոշման դէմ գործելէն աւելի մեծ սխալ չը կրնար ըլլալ. որոշում մը թէեւ սխալ, թէեւ թերի, պէտք է անդառնալի մնայ: Ատենապետին պարտքն ու իրաւունքն է բացված խնդրոց վրայ միայն խօսք տալ և դուրսէն խնդիր մը յուղված ատեն ժողովին կարծիքը հար-

ցննել . բայց այսուհետեւ չը պիտի կրնամ թողուլ որ բացված խնդրէն դուրս մէկը խօսի : Ժողովը եթէ այս առաջարկութիւնս չ'ընդունիր , կրնայ աւելի ներողամիտ մէկուն յանձնել ատենապետութեան պաշտօնը :

Այս յայտարարութիւնն ընելէ ետքը Ատենապետ էֆ. մէկ քանի երեսփոխանաց նամակներ ներկայացուց , որոնք տկարութեան պատճառով բացակայ մնալու հարկադրած ըլլալին յայտնած էին . իսկ Հիւմբիւզեան Տ. Յովաննէս Քահանայն հրաժարական գրած էր , զոր ժողովըն ընդունեց առանց զիտօղութեան :

Օրվան խնդրոց կարգն էր :

4. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԺԷՆԻՍՏԻՆ

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՑ. — 240 երեսին մէջ իմ խօսքէս բառ մը պակսեր է . « Տէրոյնց ազատ է եւայլն » խօսքերուս կարգը « այս միջոցաւ » բառը պէտք է աւելնայ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՑ. — Ատենագրութեան ըսկիցը գրված է « Ատենը բացվեցաւ 40 երեսփոխաններով եւ հետըզհետէ այս թիւը բազմացաւ » , առանց որոշ թիւը դնելու . պէտք է որոշ թիւը յիշիլի , վասն զի այդ թուական խնդիրը Ընդհանուր ժողովին գոյութեան պայմանն է (1) . Նաեւ գիտելի կու տամ թէ նախընթաց նիստերէն միայն ժի. ատենագրութիւնը հասած է մեզի , մինչդեռ հրատարակված հրատարակչոյն մէջ ժի. ժ. եւ ժ. ատենագրութիւնները մէկէն յիշված են : Ատենագրութեանց ժամանակին հասնելն ալ խիստ կարեւոր խնդիր մէ , վասն զի անոնք ալ ժողովին գոյութեան հետ վերաբերութիւն ունին :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Ձեր զիտօղութեան Ա. մասը իրաւացի է . պէտք է ներկայ եղող երեսփոխանաց որոշ թիւը նշանակիլի : Իսկ Ք. մասին գալով , հիմա ժի. ատենագրութիւնը միայն պատրաստ է եւ զիտօղութեան յանձնված . անոր վրայ միայն զիտօղութիւն պիտի ընէք :

ԻՓԷԿՃԵԱՆ Է. ԷՑ. — Ես նոր ստացայ ժի. նիստին ատենագրութիւնը եւ թերեւս ինձի պէս ուրիշներ ալ կան :

ՄԵՐԵԵԿՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՑ. — (Յանուրի 1-ին) ժի.

նիստի ատենագրութեան տետրերը շարաթէ մը ի վեր պատրաստ էին եւ երեսփոխանաց ցրելու . համար սովորական պաշտօնէից յանձնված . ինձ կը թուի թէ Նիէկէեան էֆ. ի զայն նոր ստանալը բացառութիւն մ'ըլլալու է :

Տ. ԵՐԵՄԻԱ ԵՊՍ. — Ութ օր է որ ստացած եմ ժի. նիստի ատենագրութիւնը . ի՞նչպէս կ'ըլլայ որ Նիէկէեան էֆ. ի եւ ուրիշներուն հասած է :

ԵՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՑ. — Քանի որ քրէի զընելու համար պէտք եղած թիւը ներկայ է , բնականաբար ետքի պիտի մնայ ժի. ատենագրութեան վաւերացումը . եւ որովհետեւ Նիէկէեան էֆ. էն զատ մէկը չը կայ սոյն ատենագրութիւնը ուշ աճնօղ , կրնայ մինչեւ մեծագոյն մաս գոյացած ատեն աչքէ անցնել եւ իր զիտօղութիւնը եթէ ունի պատրաստել . սակայն զգուշութիւն պատուիրել պէտք է պաշտօնէից որ սիւսանգամ ատենագրութիւնը չ'ուշանան իրենց տեղերին հասնելու :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՑ. — Կը տեսնեմ որս տենագրութեան մէջ տեղ տեղ խօսքերուն տակը ծանօթութիւններ գրված են . Ատենագրի էֆ. ունի իրաւունք այդ ծանօթութիւնները դնելու :

ԱՏԵՆԱԳՐՈՒ ԷՑ. — Ես կը կարծեմ որ ատենագրութիւնը միշտ իրաւունք ունի ըստ հարկին ծանօթութիւններ դնելու , որք յատկապէս խմբագրութեան կը վերաբերին եւ անոր մէկ մութ կէտը լուսաւորելու կ'օգնեն : Եւ ծանօթութիւն գրված խօսքը ժողովին մէջ խօսված խօսք է , ըսել է : Ասկէ միաս զգացօղն ո՞վ է որ ատենագրին այս իրաւունքը զլանալ կը խորհի :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՑ. — Ըսել է թէ միշտ այդ իրաւամբ Ատենագրի պիտի կրնայ ժողովին մէջ չ'ըրած զիտօղութիւնը իրեն ծանօթութիւն նշանակել ատենագրութեան մէջ :

ԱՏԵՆԱԳՐՈՒ ԷՑ. — Ես ըսի ըսելիքս ժողովին , ալ մէկու մը պատասխան չ'ունիմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Ժի. ատենագրութեան վրայ եթէ ուրիշ զիտօղութիւն ընող չը կայ , կարգը ժ. եւ ժ. ատենագրութեանց եկած է . այս վերջին երկու ատենագրութիւնք թէ եւ պատրաստ են , բայց դեռ տպարանէ դուրս ելած չ'ըլլալուն համար ժողովին ներողամտութիւնը կը խնդրվի :

ԱՏԵՆԱԳՐՈՒ ԷՑ. — Ներողամտութեան եթէ տեղի կայ , այն ալ Պատրիարքարանին կ'իջնայ խնդրել , որ չ'է հոգ տարած կարօղ Կիւս-

(1) Ժի. նիստին ներկայ երեսփոխանաց թիւն էր 58 , ներկայութեան տուժարին հասկեմաւ :

նապօրիններ ունենալու : Ընդհանուր ժողովոյ Կիւսնը Պատրիարքարանի վարձեալ Կիւսնը չ'է , որ բոլոր իր անձնական գործոց հրաժեշտ տալով ձեր ատենագրութեանց խմբագրութեամբն անցնէ իր կեանքը : Ատենագրութեանց խմբագրութիւնը Պատրիարքարանի զիւսանադպիրները հաղիւ թէ շարաթէ մը կը ընեն մեզի , քանի մը օր ալ հարկաւ մեր Կիւսնին մէջ կը մնայ աչքէ անցնելու համար , եւ ասով տպագրութիւնը կ'ուշանայ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՑ. — Հիմակու հիմայ Տնտեսական Խորհրդոյն մէջ կը գտնվիմ ես . տպագրութիւնը ուշանալուն պատճառ եթէ ստակին խնդիրը կը համարվի այդ խնդիրը կարգի գրված է արդէն , որպէս զի տպագրութիւնը չ'ուշանայ :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՑ. — (Ա. Արեւուդէր էֆ. - - 17-18 էր 18-19) . Խնդրոց կարգէն շեղեցաք . նախ Քրիստոստուր էֆ. ին Տնտեսական Խորհրդոյ գործադրական պաշտօնին վրայ խօսք տուիք . երկրորդ Կիւսնը այնպիսի բացատրութիւններու մէջ մտաւ որ աւելորդ են մեզի համար , իր ցուցած պակասութիւններն իր գիտնալու բաներն են , մեզի փոյթ չ'են . մենք միայն Կիւսնէն կը ընտանք որ խնդրոց կարգին մէջ գրածը իրականացնէ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՑ. — Ատենագրի էֆ. Պատրիարքարանի վրայ խօսելով խմբագրութեան եւ տպագրութեան ուշանալուն պատճառ ստակի խնդիրը ակնարկել ուզեց . անոր համար ըսի եւ դարձեալ կ'ըսեմ որ ստակի խնդրոյն գալով մենք Տնտեսական Խորհրդոյ պաշտօնը կը վարենք հիմա , եւ պէտք եղած ստակը կու տանք , որպէս զի չ'ուշանայ թէ խմբագրութիւնը եւ թէ տպագրութիւնը :

ԱՏԵՆԱԳՐՈՒ ԷՑ. — Ես ստակի խնդիր յուզել չ'ուզեցի , այլ մարդու խնդիր յուզեցի . Պատրիարքարանը ըսի պէտք է որ գործունեայ եւ յաջող դիւանագրպիրներ ունենայ . իմ խօսքս համարակալ պաշտօնէից ուղղեալ չ'էր , եւ ասկից առաջ ալ երբէք ստակի խնդիր եղած չ'էր ատենագրութեանց տպագրութեան յապաղմանը պատճառ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՑ. — Վարչութեան կ'իջնայ այդ մասին պատասխան տալ . եթէ այս ատենագրութեան գործն այսչափ կ'երկարի , եւ պատճառը Ռուսիան է Էֆ. ին ըսածին պէս Պատրիարքարանի մէջ գործունեայ եւ յաջող դիւանագրպիրներ չ'ըլլալն է , հապա ուրիշ աղգային

գործերն արդեօք ի՞նչ վիճակի մէջ կ'ըլլան : ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Խնդրոց կարգէն խոսորեցանք , վարչութեան վրայ խօսք բացվեցաւ , դիւանատան բարեկարգութեան խնդիր ծագեցաւ . պահ մ'առաջ Յոսէն էֆ. յիշեցուց եւ իրաւամբ որ խօսից կարգէն չը շեղինք . ուստի պարտաւոր եմ այս միջանկեալ վիճարանութիւնը գոցելու :

ԵՈՒՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՑ. — (Յանուրի 1-ին էր 18-19) . Խնդրոց կարգէն շեղեցաք : Սկիզբէն Ընդհանուր ժողովը չ'ուզեց այդ խմբագրութեան եւ տպագրութեան խնդիրը իրեն մէջ բերել , եւ իրաւունք ունէր . վասն զի Ընդհանուր ժողովոյ եւ Վարչութեան Կիւսններուն մէջ խօսվելու եւ կարգադրվելու խնդիր մըն էր ատի : Քրիստոստուր էֆ. խնդրոյն անտեսական մասին վրայ խօսեցաւ , կարծելով թէ անոր ակնարկութիւնը կ'ըլլայ :

Ատենագրութիւնները խմբագրելու համար Կիւսնը կը գործէ ո՞ր եւ է միջոցաւ եւ ապա կը յանձնէ Տնտեսական Խորհրդին ի տպագրութիւն . եւ որովհետեւ Երրոպայի պէս արագ տպող տպարաններ չ'ունինք , Բարիզի եւ Ղոնտօնի մէջ չ'ենք , հոս 8 օրի կարօտ է անոր տպագրութիւնը . այս պակասութիւնները կրնան ըլլալ , եւ ո՞չ որ մասնաւորապէս պատասխանատու է այս մասին :

Ատենապետ էֆ. տեսնելով որ մեծագոյն մաս գոյացած է արդէն , ժի. նիստին ատենագրութիւնը քրէի դնելու համար Նիէկէեան էֆ. ի զիտօղութիւնը կը հարցնէ նոյն ատենագրութեան վրայ :

ԻՓԷԿՃԵԱՆ Է. ԷՑ. — Կը տեսնեմ որ իմ խօսքերուս մէջ տեղ տեղ խմատի այլայլութիւն կայ , ըսածիս ճիշդ հակառակը գրված է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Ուրեմն ուղղեցէ՛ք զայն սխալները քրէի գրվելէն առաջ , եւ ցուցէ՛ք ո՞րն են սրբագրելի կէտերը :

ԻՓԷԿՃԵԱՆ Է. ԷՑ. — Ել 247 սխալակ առաջին , 377 տող գրված է « կ'ընդունելին » պէտք է ըլլայ չ'էն ընդունել : Նոյն էլ , նոյն սխալակ 457 տող գրված է « գործադրելու » պէտք է ըլլայ փերանելու : Նոյն էլ , երկրորդ սխալակ 427 տող գրված է « եւ անոր ամեն թերութիւնները , եւայլն » պէտք է ըլլայ եւ թէ ոչ թերութիւններ եւ անոր փերանելի : Ինչ քիչ քիչ չ'էն ընդունելու եւ ընդունելու : Ինչ քիչ քիչ չ'էն ընդունելու եւ ընդունելու : Ինչ քիչ քիչ չ'էն ընդունելու եւ ընդունելու :

Թերեւս ուրիշ զիտօղութիւններ եւս ունենամ , զի չը կրցայ ամբողջ կարգալ ատենագրու-

թիւնը, սակայն չ'եմ ուզեր սպասեցնել ժողովը:

Ատենապետ էֆ. մնացորդ խօսքերն ալ կարգալ կու տայ իրէքճեան էֆ.ին, եւ երբ ուրիշ դիտողութիւն չունենալը կը յայտնէ, ժե. ատենագրութիւնը քուէի կը գրվի եւ կ'ընդունվի:

2. ՎԱԽԵՐԱՅՈՒՄՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆՅ ՆՈՐ ԵՐԵՍՓՈՒԱՆԱՅ

Ատենապետ էֆ. Երեսփոխանական ընտրութեանց Գործադիր Յանձնաժողովոյն կողմէ մատուցված հետեւեալ տեղեկագիրը կարդաց:

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր, Նախագահ Ազգ. Երեսփ. Ժողովոյ

Ազգային Երեսփոխանական Ժողովէն զանազան պատճառներով պակասող եւ հրատարող անգամոց տեղ հետեւեալ նորոգ ընտրութիւններն եղած են, զորս ներկայ տեղեկագրովս Երեսփոխանական Ժողովոյդ վաւերացմանը կը ներկայացնենք:

Ազգային եկեղեցական Երեսփոխաններէն պակասող չորս Երեսփոխանաց տեղ ուրիշներ ընտրելու համար Ս. Պատրիարքը լրագրաց միջոցաւ հրաւեր կը կարդայ Պօլիս գտնող բոլոր եկեղեցականաց ի ժողով գումարիլ Մայր Եկեղեցի ի 13 փետրվար 1870. այս հրաւերին 34 եկեղեցական անձամբ կը պատասխանեն, 3 ալ նամակաւ քուէնին կը ղրկեն, ընդ ամենը 37 ընտրող: Քուէարկութիւն ու քուէհամար կ'ըլլայ եւ առաջին անգամ քուէից բացարձակ առաւելութեամբ Երեսփոխան կ'ընտրվի:

Գեր. Տ. Խորեն Եպիսկոպոս, 29 քուէով:

Ըստ որում եկեղեցական Երեսփոխանաց համեմատական քուէարկութիւնը ուրիշ օրվան մնալու տրամադրութիւն մը չը կայ Սահմանադրութեան մէջ, ուստի նոյն օրը մնացեալ 3ին համար վեց առաւելագոյն քուէ ստացողաց վրայ քուէարկութիւն եւ քուէհամար կ'ըլլայ եւ համեմատական առաւելութեամբ Երեսփոխան կ'ընտրվին:

Գեր. Տ. Խորեն Վարդապետ փոխանորդ Երեսպալիմայ, 27 քուէով:

Տ. Յովհաննէս Քահանայ Հիւնքեարպէյնեան, 22 քուէով:

Գեր. Տ. Հմայեակ Վարդապետ Ա յազմալեան, 17 քուէով:

Նիկոմիդիոյ գաւառը առկից առաջ իր Երես-

փոխանն ընտրած էր. սակայն ընտրեալը հրատարական տուած եւ այս ալ Ընդհանուր Ժողովէն ընդունված ըլլալուն նորոգ ընտրութեան հրաւիրվեցաւ Նիկոմիդիոյ գաւառին սահմանադրապէս կազմեալ Ընդհանուր Ժողովը. որ ի 21 փետրվար գումարիլեով 22 անգամոց այն է մեծագոյն մասի ներկայութեամբը ստեան կը բացվի եւ քուէից բացարձակ առաւելութեամբ Երեսփոխան կ'ընտրվի:

Մկրտիչ էֆ. Մեղպուրեան, 14 քուէով:

Հաճընոյ առաջնորդ Գեր. Պետրոս Եպիսկոպոս կը տեղեկագրէ թէ՛ ըստ Ազգ. Սահմանադրութեան Երեսփոխան ընտրած են,

Մ. Յարութիւն էֆ. Մ. Աւագ Պոյաճեան:

Այս տեղեկագիրը թէեւ ղուրկ է մանրամասն պարագաներու տեղեկութիւններէ, բայց ունի իր հետ գաւառական հանրագիր մը, որմէ կ'իմացվի թէ՛ ընտրութեան գործողութիւնը սահմանադրապէս այսինքն քուէարկութեամբ եղած է եւ արդիւնքը գաւառացոյն վստահութիւնը զրաւող մէկը ցուցած է:

Բերայի Ընտրողական Ժողովը կը տեղեկագրէ թէ՛ Երկու Երեսփոխանաց ընտրութեանը համար, 21 փետրվար, քուէարկութեան հրաւիրած է զընտրողս, եւ 20 ի մօտ ընտրողներէն միայն 21 քուէարկուեաց մասնակցութեամբը բացարձակ առաւելութեամբ Երեսփոխան ընտրված են:

Պետրոս էֆ. Միրասեճեան, 12 քուէով:

Գրիգոր Սէլիմիյէճեան, 12 »

Իւսկիւտար Ս. Խաչ Թաղի Ընտրողական Ժողովը կը տեղեկագրէ թէ՛ փետրվար 4ին Ընտրողական Ժողով կազմած, փետրվար 14, Թաղին Երեսփոխանական ընտրողները՝ որք են 317, ընտրութեան հրաւիրած, առնցմէ միայն 80 ընտրող ունեցած եւ քուէից բացարձակ առաւելութեամբ Երեսփոխան ընտրված է միայն:

Յովհաննէս էֆ. Մարգարեան, 14 քուէով:

Մնացեալ մէկ Երեսփոխանին տեղ 2 համեմատական առաւելութիւն ունեցողներն առած եւ փետրվար 21ին քուէարկութիւն ու քուէհամար կատարած եւ այս անգամ միայն 31 ընտրող գտած ու համեմատական առաւելութեամբ Երեսփոխան ընտրված է:

Սերովբէ էֆ. Պասմաճեան, 22 քուէով:

Պալատու Ընտրողական Ժողովոյ Նախագահ Գեր. Ամբրոսիոս Վարդապետ կը տեղեկագրէ թէ՛ պալատու 2 Երեսփոխանաց ընտրութեանը համար փետրվար 14ին քուէարկութեան հրաւիրած է թաղին 139 ընտրողները եւ 44 քուէարկուներով քուէհամարն ըրած, բայց բացարձակ ա-

առաւելութիւն չը գոյանալուն՝ փետրվար 21ին համեմատական առաւելութեան վրայ քուէարկութիւն ըրած եւ այս անգամ 25 քուէարկու ունենալով միայն Երեսփոխան ընտրված են:

Յակոբ էֆ. Սարգիսեան:

Վոդրանիկ պէյ Կրճիկեան:

Խազիւղի Ընտրողական Ժողովը կը տեղեկագրէ թէ՛ մէկ Երեսփոխանի ընտրութեան համար փետրվար 21 քուէարկութեան հրաւիրած է թաղին ընտրողները ըստ վերջին հրահանգի լրագրաց միջոցաւ եւ եկեղեցոյ մէջ գրաւոր ու բերանացի ծանուցմամբ, բայց առաջին անգամ բացարձակ առաւելութիւն չը գոյանալուն՝ Երկու առաւելագոյն քուէ ստացողաց վրայ փետրվար 28 քուէարկութիւն ըրած եւ 46 քուէարկու ունենալով Երեսփոխան ընտրված է:

Սարգիս էֆ. Աբրահամեան, 36 քուէով:

Էյուզ Ս. Նիլա եւ Ս. Աստուածածնայ միացեալ Թաղից Ընտրողական Ժողովը կը տեղեկագրէ թէ՛ մէկ Երեսփոխանի ընտրութեան համար մարտ 7 քուէարկութեան կը հրաւիրէ զընտրողս եւ 27 քուէարկու ունենալով Երեսփոխան կ'ընտրվի բացարձակ առաւելութեամբ:

Մ. Յարութիւն էֆ. Փափազեան, 18 քուէով:

Իւսկիւտար Ս. Վարապետ Թաղի Ընտրողական Ժողովը կը տեղեկագրէ թէ՛ մէկ Երեսփոխանի ընտրութեան համար փետրվար 28ին քուէարկութեան հրաւիրած է զընտրողս, բայց քուէհամարի արդիւնքէն բացարձակ առաւելութիւն չը գոյանալուն՝ Երկու առաւելագոյն քուէ ըստացողաց վրայ մարտ 7 կրկին քուէարկութեան հրաւիրած է զընտրողս եւ 40 քուէարկու ունենալով Երեսփոխան ընտրված է:

Յովհաննէս էֆ. Ճիլաճեան, 27 քուէով:

Արզ Սրբազան Հայր, մինչեւ ներկայ թրւականս միայն վերողրեալ ընտրութիւնները կատարված ըլլալով, որք են՝ 4 եկեղեցական 2 գաւառական եւ 9 Պօլսոյ, ընդ ամենք 15 Երեսփոխան ներկայ տեղեկագրովս կը գիմեմք Սրբազնութեանդ որ այս օրինաւոր ընտրութիւններն Ընդհանուր Ժողովոյդ վաւերացմանը ներկայացնելու բարեհաճիք:

1870 Մարտ 12

Մնածք եւ այլն:

Գործադիր-Յանձնաժողովոյ

Ատենապետ

Տ. ԱՐԵՍ

Օ. ԽՈՃԱՍԱՐԵԱՆ

Ընթերցումը կատարվելէն ետքը Ատենապետ էֆ. հրաւիրեց զԵրեսփոխաններն որ

սոյն տեղեկագրին վրայ դիտողութիւն եթէ ունին ընեն:

ՂԱԶԱՐԱՍԵԱՆ Ք. ԷՖ. — Քարակէօմրիւկէն, Քուճքաբուէն եւ Միջագիւղէն ալ ընտրելի Երեսփոխաններ կային, առնոց ընտրութիւնն ինչո՞ւ դեռ չ'է կատարվեր եւ սոյն տեղեկագրին մէջ չ'է անցեր:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խնդրէն գուրամի եյնէք խօսքը կատարված ընտրութեանց վրայ է:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Ընտրութիւններն օրինաւորութեամբ եղած ըլլալուն լաւ մը չը տեղեկացայ. արդեօք ընտրութեանց Յանձնաժողովն կրաչխաւորած է այդ մասին:

ԵՈՒՍՈՒՑԵԱՆ Ց. ԷՖ. — Կը խնդրենք Ընտրութեանց Յանձնաժողովէն որ Հաճընայ վիճակին ընտրութեան մասը երկու խօսքով բացատրէ մեզի:

ԽՈՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — (Յանաւ Ընտրութեանց Յանձնաժողովոյ) Հաճընայ առաջնորդ Պետրոս Եպիսկոպոս կ'ըսէ իւր տեղեկագրին մէջ թէ՛ ըստ ձեր հրահանգի կատարեցաւ Երեսփոխանական ընտրութիւնը. այս տեղեկագիրը վերացական եւ մութ էր մեզի համար՝ եթէ չ'ունենաք իւր հետը գաւառական հանրագիր մը, որ կ'իմացնէր թէ ընտրութիւնն ըստ Սահմանադրութեան քուէարկութեամբ կատարվեր է:

Ատենապետ էֆ. այս բացատրութեան գոհացուցիչ ըլլալը յայտնելով եւ տեսնելով որ ուրիշ դիտողութիւն ընող չը կայ, Ընտրութեանց Յանձնաժողովոյ տեղեկագրին ամբողջ քուէի գրաւ, զոր ժողովն ընդունեց. ուստի վաւերացեալ հրատարակելով կատարված ընտրութիւնները հրաւիրեց ի պաշտօնէ ըզՊատրիարքաբանը որ նորընտիր 13 Երեսփոխանաց յատուկ հրաւիրագրով յայտ առնէ իրենց պաշտօնը:

3. ՎԵՐԱԲՆՆՈՒԹԻՒՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Արդէն ամենքդ ալ զիտէք թէ՛ վերաքննութիւնը արդի գործադրութեան մէջ եղած Սահմանադրութեան թէ՛ Յանձնախըմբին բերած ծրագրին վրայ ընելու մասին խնդիր մը ծագած էր, եւ ժողովը իւր նախընթաց նիստին ուղեց վիճաբանութիւնը շարունակել եւ այսօրվան նիստին թողուլ, որ ներկայ չեղողներն ալ մէջ բերված պատճառներն իմա-

նան, եւ այնուհետեւ քրեւով խնդիրը լուծվի : Հետեւապէս այսօր կարգն եկած է քրեւի դընելու :

ՊԵՏԵԱՆ Թ. ԷՖ. — Այսօրվան ներկայացած խնդրոց ցանկին մէջ սոսկ վերաքննութիւն բառը գրված է Սահմանադրութեան քով, մինչդեռ ասկէ առաջ ուրիշ կերպով գրված էր :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կարգը միշտ Սահմանադրութեան վերաքննութեանն է, եւ այս կարգը երբէք չ'է փոխված. «Թաղական մատակարարութիւնը» մնաց ատեն մը խնդրոց ցանկին մէջ ըստ որոշման ժողովոյն, բայց ետքը ընդհանուր տրամադրութեանց վիճարանութիւնն ընել որոշվեցաւ, եւ այս ալ մնաց ատեն մը, եւ դեռ չ'է լմնցած, եւ լաւ եւս դեռ չ'է սկսված. ըսել է միշտ վերաքննութեան վրայ կը դառնայ խնդիրը :

Նախորդ նիստին վիճարանութեան շարունակութիւնն է այսօր եւ բան մը չ'է փոխված, եւ դուք դարձեալ կրնաք խօսիլ ատոր վրայ : Իսկ ես չ'եմ կրնար հարցնել եւ վայրկեան մը մտածել անգամ թէ ո՞ր Սահմանադրութիւնն է վերաքննելին, երբ մենք հասարակութեան եւ պատմութեան առջեւ հրատարակեցինք. երբ ժողովն իր բացված օրէն գիտէր թէ ի՞նչ էր իր ընելիքը, եւ երբ 20 նիստէ ի վեր տարակոյս մը չը կար, ես չ'եմ կրնար այսօր խնդրոց կարգին մէջ զնել իբրեւ զատ խնդիր թէ «ի՞նչ է ընելիքնիս» եւ զանի հոս ստորադրելով առաջի պատմութեան այդ անանուն ընթացքին պատասխանատուութիւնը ըստանձնել :

Ժողովականաց բմանց այս ընթացքը ինձի համար անմեկնելի է եւ զանի որպիսացնելու բառը կը պակսի բերնիս մէջ : Երբեւ ատենադպիր ինձի համար հերիք է որ «վերաքննութիւն Սահմանադրութեան» ըսելով խնդիրը ներկայացուցած ըլլամ, ինչպէս որ էրն առաջնորդը նիստին մէջ. դուք ազատ էք ձեր բարոյական պատասխանատուութեանը տակ զանի ուղածուդ պէս քաշկառելու :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Մանաւանդ թէ այս կէտին վրայ վիճարանութիւն կրնանք չ'ընել, զի օրագիրներն ալ բաւականապէս գրեցին, եւ մեր ընթացքը քննադատեցին :

ՊԵՏԵԱՆ Թ. ԷՖ. — Նախորդ նիստին քրեւի չը գրվեցաւ իսկ այսօր քրեւի պիտի գնեմ կ'ընէք, սո կարծեմ խօսողներուն վրայ բռնաբարութիւն մըն է, եւ ատոր համար ալ խնդրոց կարգը չը պարունակէր յուզվելիք խնդիրը :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուսկէ է այդ ձեր կաս-

կածը. քրեւի չը գնողը ժողովն էր եւ ոչ Գիււանը :

ԽՅՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Կը բողոքեմ, խնդրէն դարձեալ կը շեղինք :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Իօսից կարգը նախորդ նիստին վիճարանութեան շարունակութիւնն է ըսաւ Ատենադպիր էֆ. ըսել է թէ խնդրէն շեղում չը կայ երբ նախորդ նիստին յուզված խնդրոյն վրայ է խօսքը. խնդիրն այն է թէ Յանձնախումբին ծրագրին վրայ էլ ի՞նչ նոյն իսկ գործադրութեան մէջ եղած Սահմանադրութեան վրայ վերաքննութիւն պիտի ընենք :

ԽՅՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Պէկեան էֆ. դիտողութիւն մը կը յարուցնէ ինչպէս անցեալ նիստին մէջ ալ, որում ես ներկայ չ'էի, եւ բացադանութիւններ ընելով բռնաբարութեան խօսքեր մէջ կը բերէ. այս եղած խօսքերն անդամ աւելորդ են. անկեղծութեամբ կ'ըսեմ թէ անցեալ նիստին շփոթ վիճակին արդիւնքն է ասի : Ատենադպիր էֆ. խնդրոց կարգէն չը շեղելու խոստում ըրաւ, պէտք է որ իւր խոստմանն հետեւի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ճիշդ այդ մտօք է որ խօսք ուղղորդելուն խօսք կու տամ. անցեալ նիստէն քրեւարկութիւն չ'ըրաւ ժողովը եւ ուղեց վիճարանութիւնը շարունակել սա կէտին համար թէ արդեօք Յանձնախումբին ծրագրին վրայ թէ նոյն իսկ գործադրութեան մէջ եղած Սահմանադրութեան վրայ վերաքննութիւն պէտք է ընել :

ՊԵՏԵԱՆ Թ. ԷՖ. — Օղջէն էֆ.ի դիտողութեան պատասխանելու հարկ չը մնաց, զի Ատենադպիր էֆ. պէտք եղածը խօսեցաւ արդէն : Իսկ գալով անցեալ նիստին մէջ յարուցած խնդրոյս, պատրաստ եմ խօսիլ ի՞նչ ժողովը կը ներէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը կրկնեմ որ խօսողն ամբողջ լրացնէ իր խօսքը, որչափ ըսելիք ունի մէկ անգամուն լմնցնէ՝ քանի մը անգամ խօսք չուզելու համար, բայց սա պայմանաւ որ բացված խնդրէն դուրս չը խօսի :

ԽՅՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Կը պնդեմ որ խնդրոց կարգէն դուրս խօսք չ'ըլլալ որոշված է, միջանկեալ խնդրոց մը վրայ ականջ չ'ունիմ մտիկ ընելու :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Անցեալ նիստին դուք ներկայ չ'էիք, Պէկեան էֆ. խնդիր մը յուզեց, որոյ վրայ վիճարանութիւն բացվեցաւ եւ ժողովը քրեւից առաւելութեամբ որոշեց որ նոյն վիճարանութիւնը շարունակվի. վիճարանութեան

առարկան սա է թէ՛ նո՞ր ծրագրին թէ՛ հին Սահմանադրութեան վրայ պիտի ըլլայ վերաքննութիւնը : Հետեւաբար խօսքը Պէկեան էֆ.ին է :

ՄԱԶԼԸՄԵԱՆ Յ. ԷՖ. — Արդէն որոշված է որ նոր ծրագրին վրայ ըլլայ քննութիւնը :

(Նշանակելիք ինքուր ինքնէն ԳՐԵՆՆԻՆ ԳՐԵՆՆԻՆ ԳՐԵՆՆԻՆ)

ՊԵՏԵԱՆ Թ. ԷՖ. — Այսօր երեսփոխանական լնդ. ժողովոյ ատենանը կը գտվի ազգային Սահմանադրութեան վերաքննութեան խնդիրը, որուն լուծումն ուղղակի եւ մի միայն իրեն կը պատկանի, եւ որովհետեւ ինքը՝ ըստ որում օրէնսդիր ժողով չը կրնար իրեն ներկայացած խնդիր մը օրինաց, այն է՝ Սահմանադրութեան հակառակ լուծել, առանց նախ օրէնքը եղծելու, որուն ազատ չ'է. ուստի կը պարտաւորի այս խնդրոյն մէջ ալ օրինաց բոլորովին համաձայն դործել :

Վերաքննութեան այս խնդիրն օրինաւորապէս լուծելու համար պէտք է գիտնալ թէ ուսկի՞ց եւ ի՞նչպէս ծագում առած է այն. ո՞վ զգացած է անոր պէտքը եւ ի՞նչ եղանակաւ կատարված է վերաքննութիւնը : Ասոնց վրայ որոշ տեղեկութիւն յայտնող պաշտօնական գիր մը չըկայ լնդ. ժողովոյ ատենանը. այլ միայն ծրագրի մը յարակից տեղեկագիրը վեր ի վերոյ ծանօթութիւն կու տայ մեզ, թէ Բ. Իւուր վերաքննութեան Յանձնախումբ մը կազմած եւ Սահմանադրութեան ծրագիր մը զրկած ըլլալու է Ազգինն, եւ լնդ. ժողովն ալ յանձնախումբի մը ձեռք զայն վերաքննել տուած է :

Այսչափ միայն պաշտօնական բաւական չ'է կարծեմ մեր ընտուած կէտերը պարզելու : Մենք ուրեմն հակիրճ պատմեցք եղելութիւնը, որովհետեւ կարեւոր է խնդրոյն լուծմանը :

Կայսերական հրամանաւ ազգ. Սահմանադրութիւնը վերահաստատվելէ երկու տարի ետքը, 1865 հոկտեմբեր 22, երեսփոխանական լնդ. ժողովոյ մէջ խնդիր կը ծագի պայմանաժամէն առաջ Սահմանադրութիւնը վերաքննելու : Բայց ժողովը մեծազոյն մասին քրեւով կը մերժէ այդ տարածամ վերաքննութեան առաջարկութիւնը՝ համաձայն Սահմանադրութեան : Ազգին կամքն այսպէս ազատ եւ բացարձակ կերպով յայտնվելէ ետեւ, յազգայնոց ոմանք՝ ծանօթ եղած կրօնական իրաւասութեան խնդրոյ մը առթիւ, յանուն Ազգին, յանուն երեսփոխանական լնդ. ժողովոյ Սահ-

մանադրութեան տարածամ վերաքննութիւնը կը խնդրեն Բ. Գունէն, մինչդեռ ազգային լնդ. հանուր ժողովը մեծազոյն մասին քրեւով բացարձակապէս եւ իրաւամբ մերժած էր այդ վերաքննութիւնը : Կայսերական կառավարութեան հրամանաւ կը դադարի Սահմանադրութիւնը, 1866 մարտ 20, եւ անոր վերաքննութիւնը (հասկեցիր նոր Սահմանադրութեան մը խմբագրութիւնը) Բ. Գուուր կազմված Յանձնախումբի մը ձեռք կատարվելէ ետեւ կը զրկվի Ազգին, որպէս զի երեսփոխանական լնդ. հանուր ժողովը եօթ հոգիէ բաղկացեալ Յանձնախումբի մը ձեռք իր զիտօղութիւններն ընելով Բ. Գրան հաղորդէ : Լնդ. հանուր ժողովը, փոխանակ այսպիսի սպօրինաւորութեան մը տեղի տուող ազգային հեղինակներուն դէմ բողոք բառնալու եւ իւր իրաւունքները կայսերական բարեխնամ կառավարութեան ուղղութեանը ներկայացնելու, 1868 ապրիլ 12, Բ. Գրան հրամանադրին համեմատ Վերաքննիչ Յանձնախումբ մը կ'ընտրէ ու գրան ծրագիրը, առանց իր ատենին մէջ կարգալու ու անոր ողբոյն ու տրամադրութեանցը վրայ զիտօղութիւն ընելու, անոր քննութեանը կը յանձնէ. այս քննութեան արդիւնքն եղող ծրագիրն է անա՛ այսօր ազգային լնդ. հանուր ժողովոյ ատենանը գտնվածը :

Հիմայ պէտք է քննենք թէ օրինաւոր է այս ծրագիրը :

Ժամանակաւ լնդ. հանուր ժողովը՝ Վերաքննիչ Յանձնախումբ մը կազմած ատեն չ'ունէր իր ձեռքը օրինադիրք մը, (Սահմանադրութիւն ըսել կ'ուզեմ) որուն համեմատ կարենար դործել. այն իրեն դժբաղդութիւն մըն էր, այն ատեն ինքը՝ յազգայնոց ոմանց մատնութեանը ճնշման տակ մնալով, պարտաւորեալ կը զրկվէր առանց օրինադրքի գործելու, որ անհրնար էր. այս դժուարին կացութիւնը զինքը հարկադրեց Ազգին ձեռքէն առնված Սահմանադրութեան վերաքննութեան օրէնքին անհամաձայն յանձնախումբ մը կազմելու Բ. Գրան ծրագիրն անոր քննութեանը յանձնել, որուն արդիւնքն է, ինչպէս վերն ըսինք, ներկայ ծրագիրը : Բայց ո՞վ կրնայ հաւատալ թէ Բ. Գրան ծրագիրը բնաւ յատակադիծ կամ ուղղեցոյց եղած չ'ըլլայ լնդ. հանուր ժողովոյ Վերաքննիչ Յանձնախումբին. ո՞վ կրնայ ժխտել թէ Յանձնախումբին գործօղութիւնը ճնշումն ազատ չ'էր. քանի որ նոյն իսկ լնդ. հանուր ժողովոյ տարածամ վերաքննութեան այս որո-

չու՞մը հարկադրութենէ մը առաջ եկած էր, իր ազատ որոշմանն ու քրէին դէմ էր, Ազգին կամացն արտայայտութիւնը չէր. քանի որ Յանձնախմբին քննութեանը յանձնվածը՝ բուն իսկ Բ. Գրան ծրագիրն էր. մինչդեռ վերաքննութիւնը եթէ հարկը ազգովին տեսվէր, գործադրութեան մէջ եղած Սահմանադրութեան վրայ, եւ այն ալ վերաքննութեան յօդուածին տրամադրութեանը համեմատ պէտք էր կատարվի, եւ ոչ թէ Բ. Գրանը կազմված Յանձնախմբի մը հնարած մէկ նոր ծրագրին վրայ. որպէս զի փորձառութեամբ տեսնված ամոր՝ թերութիւնները միայն սրբագրվէին. Արդ՝ այս ծրագիրը, ինչպէս ակներեւ կը տեսնվի, ճշման արդիւնք է, դժբաղդ ժամանակի եւ ցաւալի պարագաներու դառն պատու մ'է, Ընդհանուր ժողովոյ դէմ սպառնալիք մ'է, որուն հետքն անգամ պէտք է նշմարվի. Քանի որ այժմ պարագաները փոխված են. կայսերական կառավարութեան հրամանաւ դադարեալ Սահմանադրութիւնը դարձեալ բարձրագոյն հրամանաւ գործադրի սկսած է, որով այսօր Ընդհանուր ժողովը բարեբաղդաբար ունի իր ձեռքն օրինագիրը մը, որուն մէջ օրվան խնդրոյն վերաբերեալ օրէնք մը կայ յստակ կերպով բացատրված. քանի որ այս օրէնքը կայ, չենք կրնար անոր անհամաձայն՝ ապօրինաւոր եղանակաւ շարունակել Սահմանադրութեան վերաքննութեան մեծ ու կենսական գործը. չենք կրնար ճշման արդիւնքն եղող ծրագրի մը վրայ մեր քննութիւնը հիմնել ու մեր գործը դժուարացնել. Երեսփոխանական ժողովը՝ ըստ որում օրէնսդիր ժողով եւ օրինաւորութեան ազգիւր, չը կրնար ապօրինաւորութենէ բարիք յուսալ, որչափ ալ հաւանական եղած ըլլայ կարծեցեալ բարիքը.

Արդհետեւ բացայայտ կը տեսնվի թէ մեր Ազգային Սահմանադրութեան վերաքննութիւնն ապօրինաւորութենէ սկսած, եւ որովհետեւ ամեն օրինաւորութիւն գործողութեան մը ըսկողքէն մինչ ի վերջը պէտք է տեղի ունենայ, ուստի վերաքննութեան խնդիրն իր ներկայ վիճակին մէջ օրինաւորութեան շրջանէն դուրս գտվելուն համար. նախ օրինաւորութեան մէջ պէտք է զայն մտցնել. եւ անշուշտ պէտք է.

Ոմանք կը կարծեն թէ օրինաւորութիւնը անգործութեան կը դատաստարտէ զիշխանութիւնը. սխալ մ'է այս. եւ ոմանք կարծեցին

ու կը կարծեն թէ նոր խնդիր մ'է յարուցածու. սակայն ես նոր խնդիր չը յարուցի. ես ոչ կաթողիկոսական, ոչ արոց եւ զ'ալ ուրիշ խնդիր յարուցի. այլ նոյն իսկ խնդրոց կարգն եղած ու Ընդհանուր ժողովոյ վիճարանութեանը ենթարկված խնդիրը յուղել ու զեցի, բայց հիմնական ու օրինաւոր կերպով, եւ Ընդհանուր ժողովոյ ուշադրութիւնը խնդրոյն էական կէտին վրայ հրաւիրեցի. գո՛հ եմ որ Երեսփոխանական պատկառելի ժողովը իւր մեծագոյն մասին հաւանութեան քրէնովը կարեւորութիւն ընծայեց խնդրոյս, որով հաստատեց թէ արդարեւ իմ դիտողութիւնս խնդրէն դուրս չ'էր ու չ'է.

Եթէ վերաքննութիւնն Ազգին ազատ կամօքնն ու ձեռքերնիս եղած Սահմանադրութեան տրամադրութեանը համեմատ ժողովոց ու խորհրդոց անդամներէն ու դրանէն 20 հոգիէ կազմված Յանձնախմբի ձեռք կատարված ըլլար, այն ատեն ծրագիրն այս պարունակութիւնները պիտի ունենար. կը կարծէք թէ ժողովրդին երեսփոխանական ուղղակի ընտրութեան անբանաբարելի իրաւունքը ձեռքէն անտօ՞ծ պիտի ըլլար, կը կարծէք թէ այդ յափշտակեալ իրաւունքը՝ առանց ժողովրդեան քրէին Թագական ժողովոց ակտաներուն մէկ մասը գրաւօղ ժողովականաց՝ պիտի սեպհականվէր. կը կարծէք թէ երեսփոխանութեան կազմութեանը մէջ պապական դրութիւն, եւ թագական ժողովոց կազմութեանը մէջ ժառանգական իրաւանց հաստատութիւն տեղի պիտի ունենային. կը կարծէք թէ գործադիր վարչութեան կազմութեանը մէջ՝ իբր պաշտօնէութիւն՝ միապետական դրութիւն պիտի տիրէր, անյարմար բոլորովին մեր Ազգին ներկայ վիճակին. կը կարծէք թէ սեղմեալ եւ կաշկանդեալ դրութիւն՝ պապական եւ միապետական դրութեանց հետ մեր ազգային Սահմանադրութեան հիմնական տրամադրութիւնները պիտի ըլլային. ո՛չ. ո՛չ առանց եւ ոչ մէկը պիտի գտնվէր, այլ տակաւին մեր ձեռքն եղած Սահմանադրութեան ազատ ոգին ու գործադրելի տրամադրութիւններն անկորուստ պահվելով, փորձառութեամբ ճանչցված անոր թերութիւնները միայն պիտի սրբագրվէին, որով վերաքննութիւնը ճիշդ իր նպատակին պիտի ծառայէր. մինչդեռ ներկայ ծրագիրը, բոլորովին կերպարանափոխեալ նոր եւ անյարմար մեր ազգային զգացմանցն ու սովորութեանցը, յաւատարմար

հետեւութիւններ պիտի ունենայ. Ազգը՝ երկար ժամանակ մեծ դժուարութիւններ կրելէ, մեծ գոհօղութիւններ ընելէ ետեւ, վերջապէս դարձեալ զայն անգործադրելի վճռելու պիտի հարկադրի. եւ այն ատեն ի՞նչ վիճառութիւն պիտի տիրէ ժողովրդեան սրտին մէջ. Սահմանադրութիւնը մեղի համար չ'է եղեր պիտի բռնէ ու վերաքննութեան նոր փորձեր ընելէ իրաւամբ պիտի խորշի. Աշտեցէ՛ք ուրեմն թէ ո՛րչափ ծանր միանգամայն կենսական է վերաքննութեան խնդիրը. անկէ կախում պիտի ունենայ ժողովրդեան Սահմանադրութիւնը սիրելը կամ ատելը.

Գարձեալ շշուէններ կ'ընդհատեն Պէկեան էֆօին խօսքը. եւ կը բողոքեն խնդրէն չեղելուն համար.

Ատենապետ էֆօին ազդարարութեամբ շշուէնները կը դադրին, եւ Պէկեան էֆօ. կը շարունակէ իր ատենախօսութիւնը.

Բայց կարեւոր է գիանալ թէ ո՞վ է Սահմանադրութեան վերաքննութեան պէտքն զոչոքը, ո՞վ են անոր թերութիւնները տեսնողները, ի՞նչ փորձերով քաղցեցին այդ հատութիւնները, որ ժողովոց ու խորհրդոց մէջ տեսան անոր անգործադրելի ու պակասաւոր կէտերը, ո՞ր դիւանին մէջ պաշտօնապէս արձանագրված են այս ամենը. եթէ մեր ազգային Սահմանադրութիւնը գլխաւոր թերութիւն մ'ունէր, այն ալ՝ պատմական օրինաց անդոյութիւնն էր, յորմէ օգուտ քաղելով խումբ մը ազգայինք, Ընդհանուր ժողովոյ կամացը հակառակ, յաջողեցան աներկեւան պահ մը տապալել ազգային Սահմանադրութիւնը.

Իսկ դուք, ազգային Վերաքննիչ Յանձնախմբի մեծապատիւ անդամք, ինչո՞ւ ինքնասիրութիւննիդ վիրաւորեալ կը տեսնէք, դուք պաշտօն մը ընդունեցաք եւ զայն ի գլուխ հանեցիք, որչափ որ ներեցին ժամանակն ու պարագայները. իրաւ է թէ ձեր ընտրութիւնը Ընդհանուր ժողովը կատարեց, բայց անտէ մէկ ատեն մը՝ որ Ազգն իր ձեռքէն կորուսած էր Սահմանադրութիւնը, եւ Բ. Գրան մէկ հրամանագիրն եօթ հոգիէ բաղկացեալ յանձնախմբի մը կազմութիւնը Ընդհանուր ժողովէն բացարձակապէս կը պահանջէր, իւր ծրագիրն անոր դիտողութեանը յանձնելու համար. ուստի ձեր ընտրութիւնն՝ որ Ընդհանուր ժողովը կատարեց, ճշման արդիւնք էր.

Իր ըրածը հարկադրութեան առջեւ զիջում մ'էր, որուն դէմ պարտ էր բողոքել ու չը բողոքեց. արդ՝ ճշման հետեւութիւն եղող ընտրութիւն մը՝ բնականաբար ճշեալ արդիւնք կրնայ արտադրել. Ձեր արգիւնքն ալ, ծրագիրնիդ ըսել կ'ուզեմ, այդ կարգէն է. Բայց Բ. Գրանը յետոյ համոզվելով մեր ազգային Սահմանադրութեան անգործադրելի չ'ըլլալուն, վերստին զայն շնորհեց Ազգին. ուստի ինչպէս ժամանակն ու պարագայները փոխված են այժմ, նոյնպէս պէտք է եւ մենք մեր նախկին որոշումը փոխենք. Մեր հարկադրութեամբ ըրած ապօրինաւոր գործողութիւնը ոչինչ համարենք ու նորէն վերաքննութեան օրինաւոր կերպով սկսինք, եթէ վերաքննութեան պէտքն ազգովին տեսվի. եւ այն կէտերը միայն վերաքննենք, որոց անհրաժեշտ պէտքը հասուն փորձառութեամբ տեսված են. որպէս զի վերաքննեալ սահմանադրութիւնն իրապէս գործադրելի ըլլայ եւ Ազգին պիտոյցը պատասխանէ.

Գուք իբրեւ Վերաքննիչ Յանձնախմբի անդամք, ծրագիր մը պատրաստեցիք ժամանակին եւ պարագաներուն համեմատ, այժմ զայն հերքողներուն առաջիններն եղիք, իբրեւ ազգային ազատ երեսփոխանք, ժամանակին բերմանցը համեմատ.

Ինչ անպատեհութիւն կայ ես դառնալուն մէջ խոտոր ճամբէ մը, ուր ժամանակաւ Ընդհանուր ժողովը յակամայից բռնադատեալ հարկադրել է մանելու, հակառակ Սահմանադրութեան օրինաց, հակառակ իր նախկին ազատ որոշմանը. քանի որ այսօր Ընդհանուր ժողովը միւսնոյն հարկադրութեանց մէջ չը ձգվելէ ի դատ, այնպիսի զիրքի մը մէջ կը գտվի, որով պարտաւորեալ է իր շաւիղն ուղղելով ձեռքն եղած օրինաց, կայսերական կառավարութիւնէն վաւերացեալ Ազգ. Սահմանադրութեան, համաձայն քաղելու, որուն հիմնական տրամադրութեանցը վերաբերեալ խնդիր մը, ինչպէս ներկայ վերաքննութիւնը, չը կրնար քրէի ենթարկել. որովհետեւ իրաւունք մը, օրինաց տրամադրութիւնքը չ'են կրնար քրէի դրվիլ, առանց կանխաւ զայն օրէնքը եղծելու.

Ոմանք ընդունան կ'առարկեն թէ արդէն Ընդհանուր ժողովը նախօրը նիստերով ընդունած ըլլալով ծրագրին վրայ կատարել վերաքննութիւնը, իւր վճիռն անդառնալի է. Այս իրաւացի պատճառ մը չ'է Ընդհանուր ժողովը խոտոր ճամբայ մը շարունակել հարկադրելու հա-

մար . սոսկ բանադատութիւն մ'է . թո՛ղ որ Ընդհանուր ժողովն իր անսխալ չ'ըլլալը զիտնալով քանի քանի անգամ իր որոշումներն ետ առնուլ արժան դատած է . թո՛ղ որ Ընդհ. ժողովոյ մէջ՝ այս խնդրոյն ուսկի՞ց եւ ի՞նչպէս ծագում առած ըլլալուն վրայ պէտք եղած պաշտօնական տեղեկութիւն չը հաղորդված , զայն կանխաւ վիճարանութեան չը դրված , խնդիրը չը լուսարանված , վերաքննութիւնը ներկայ ծրագրին վրայ կատարվին անմիջապէս քրէի գրված է . որոշված խնդիր մ'է ըսվածը՝ դեռ իր աւարտումը չ'է ստացած , եւ արդէն Ընդհանուր ժողովը միեւնոյն խնդրոյն մէջ իր մէկ որոշումը , այն է՝ վերաքննութիւնը ծրագրին «Թաղական մատակարարութեան» զլխէն սկսիլը յետս կոչելով , նախ անոր ընդհանուր տրամադրութեանը վրայ տեսութիւն մ'ընելու եւ վիճարանելու հարկ տեսեր է . եւ անա՛ այս ընդհանուր տեսութեան նոր որոշումն է որ զմեզ առաջնորդեց ծրագրին աղբւրը քննել . քննեցինք ու տեսանք թէ պղտոր է եղեր . զայն պարզել մեր նուիրական պարտքը միանգամայն իրաւունքն է :

Կ'ամիտիւնք ըսածնիս .

1. Վերաքննութեան պէտքը ազգային ազատ կամքով օրինաւորապէս որոշված չ'է .
2. Վերաքննութիւնը ազգային Սահմանադրութեան համաձայն կատարված չ'է .
3. Ընդհանուր ժողովոյ ներկայացած ծրագրիը՝ ճնշման ու հարկադրութեան արդիւնք ըլլալով , անընդունելի է .
4. Ընդհանուր ժողովը՝ ըստ որում օրէնսդիր ժողով ազգովին ընդունված եւ գործադրութեան մէջ եղած Սահմանադրութեան համաձայն գործելու պարտաւոր է .

5. Օրինաց տրամադրութիւնները իրենց գործադրութեան շրջանին մէջ քրէի չ'են ենթարկիր :

Անա՛ ասոնք են , երեսփոխան էֆէնտիներ , իմ դիտողութիւններս , զորս ձեր բարձր ուշադրութեանը կը ներկայացնեմ . ձեզի՛ կը մնայ արգարութիւնը գործադրել , օրէնքը յարգել ու պաշտպանել :

(Իսկուհի Լ. Չիլի Բրոննիստ)

ԽՈՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՅ. — Այն միջոցին երբ Ատենապետ էֆ. մեզի վստահութիւն տուաւ որ որոշված խնդրէն դուրս մէկուն խօսել չը պիտի տայ , Պէկեան էֆ. նոր խնդիր մը կը յարուցնէ . այն թէ՛ նոր ծրագիրը պէտք չ'է քնն-

նել . իր առարկութեանց բողոքին դէմ ալ խօսք ունիմ , բայց որովհետեւ խնդրէն դուրս է . կ'ըստպասեմ որ ամեն երեսփոխան իր դիտողութիւնն ընէ , եւ յետոյ պէտք եղածը պիտի խօսիմ :

ՂԱՋԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅ. — Սգան էֆ. իւր օրաթերթին մէջ Ընդհանուր ժողովոյ ընթացքը այսպանելի կը դատէ . ասի բաւական չը սեպելով հոս ալ նոյն այսպանելի դրոշմը տալ կ'ուզէ ժողովին , երբ ոմանց խօսքերը բացազանչութիւն կը համարի . կը բողոքեմ այս մասին :

ՔՕԼՕԼԵԱՆ Ա. ԷՅ. — Առաջարկութիւններ կ'ըլլան իբրեւ նոր , եւ ո՛չ մէկը նոր է . երկու նիստէ ի վեր վերաքննութեան խնդիրը այնպիսի գոյներ կ'առնէ որ նոր բան մը կ'երեւնայ , բայց իրօք նոր չ'է . ի՞նչ հարկ կայ վիճարանի թէ նոր ծրագրին կամ հին Սահմանադրութեան վրայ վերաքննութիւն ընենք . ո՛րն ալ ըլլայ միեւնոյն ճամբան պիտի տանի ըզմեզ . ես Սահմանադրութեան երկու տետրակներուն վրայ տարբերութիւն չ'եմ գտներ . ինչո՞ւ պարապ տեղը վիճարանինք թէ նոր ծրագիրը ո՛վ է ներկայացուցեր . բաւական է որ երկու տետրակ ունինք , յօդուած առ յօդուած սկսինք քննել եւ մեզի՛ ընդունելի յօդուածը որի՞ն մէջ գտնենք , անկէ զանի առնունք . ասով վերաքննութիւնը կատարած կ'ըլլանք . Ո՞վ կայ մեզ արգիւտ թէ մէկէն միայն պիտի առնունք եւ ո՛չ երբէք միւսէն :

ԻՓԻՆՃԵԱՆ Է. ԷՅ. — Ասոնք որ նոր խնդիր մը երեւան ելած է ըսողներուն դէմ կը բողոքեն , իրաւունք ունին . խնդիրը նոր չ'է մեզի համար , ատենադրութիւններն ի ձեռին կը հաստատեմ զայս . ստուգիս քանի մը նիստ առաջ ներկայացված ծրագրին վրայ վերաքննութիւն առաջարկվեցաւ եւ յետոյ բողոքներ եղան , բայց ի վերջոյ գործադրութեան մէջ եղած Սահմանադրութիւնը վերաքննութեան ենթարկվեցաւ . Նպատակ չ'առնիմ ամենեւին դիտաւորութիւններ քննել անցելոյն մէջ . խօսքը կարճ կատելու համար փոխանակ անցեալին դիմելու անմիջապէս գործադրութեան մէջ եղած Սահմանադրութեան վրայ վերաքննութիւն սկսիլ հարկ է . այս էր ի սկզբան իմ առաջարկութիւնս , հիմայ ալ նոյնը կը կրկնեմ , եւ կ'առաջարկեմ որ քրէի դրվի որոշվի այս խնդիրը : Պէկեան էֆ. ի ըսածը թէ վերաքննութիւնը ազգովին ընդունված չ'է , սխալ է . ընդհակառակն ընդունված է . սակայն եղանակի մասին ժողովը իւր առջի որոշման մէջ սխալած ըլլայն երբ իմացաւ , զանի ետ

ասաւ . ասոր դէմ բողոքներ չ'են ըլլար եթէ նորէն քրէի դրվի . իսկ թէ որ տարբեր խնդիրներ յուղելով ժամանակ պիտի անցնի , ըսել է թէ այս բանիս մէջ յատուկ դիտումներ կան :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Խնդրոյն կարգը նախորդ նիստէն մնացած վիճարանութեան շարունանակութիւնն է , եւ վիճարանութեան առարկան սա է թէ՛ ժողովը արդի Սահմանադրութեան թէ՛ Յանձնախումբին բերած ծրագրի՞ն վրայ վերաքննութիւն ընէ . հին ու նորի խնդիր չը կայ , ո՛չ ալ բողոքող կայ :

Հիմա խօսք ուզողները միայն պէտք է խօսին թէ ի՞նչ պատճառներով կ'ուզեն Յանձնախումբին ծրագրին կամ գործադրութեան մէջ եղած Սահմանադրութեան վրայ վերաքննութիւն ընել , առանց անցեալ խնդիրներ մէջ բերելու կամ մարտ 20ի պարագան յիշեցնելու , որոյ ծնունդը համարելով մերժել կ'ուզվի Յանձնախումբին բերած ծրագիրը . այս պարագան ալ ի բաց թողուլ որոշված է արդէն եւ ասոր վրայ խօսք ուզողներուն խօսք չը կայ այսուհետեւ . ըստ որում Ատենապետը որչափ փափաք եւ ջանք ունենայ դուրսէն խնդիր յուղել չը տալու , գարձեալ խօսողը միշտ ջրհեղեղէն խօսք բանալու պատճառ մը կրնայ գտնել . եւ յանձնու երկարել իւր խօսքը :

Ուրեմն կը հրաւիրեմ երեսփոխան էֆ.ները որ արդէն բացված վիճարանութեան վրայ միայն իրենց խօսքը շարունակեն եւ համառօտիւ իրենց կարծիքը յայտնեն թէ վերաքննութիւնը ո՞ր տետրակին վրայ սկսելու է :

ՄԱՋԼԸՄԵԱՆ Յ. ԷՅ. — Ինչպէս Ատենապետ էֆ. եւ ժողովականներէն ոմանք , նոյնպէս ես ալ բան գործ ըրած ենք վիճարանութիւնները օրինաւորութեան մէջ պահելու , զի փորձով կը տեսնենք որ հետըհետէ այս պակասութիւնները փոխանակ ջնջվելու կը շատան : Ինչպէս կը յիշէք , ասկէ առաջ խնդիր մը ծագեցաւ եւ զլխաւորաբար Խիէկճեան էֆ.ի կողմէն թէ՛ վերաքննութիւնը արդի Սահմանադրութեան թէ՛ Յանձնախումբին ծրագրին վրայ պիտի ըլլայ . Ատենապետ էֆ.ին հետ Ռուսիանեան եւ ուրիշ երեսփոխան էֆ.ներ արդէն պատասխանեցին թէ ատիկա խնդիր չ'է

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — (Ը՛րդիւնէլ) Դուք ալ կը չեղիք խնդրոյն կարգէն . անօգուտ է այդ մասին խօսիլ . ըսէ՛ք ձեր կարծիքը թէ ո՛րն է վերաքննութեան առնվելու տետրակը , եւ ձեր կարծիքն ինչ որ է այս կէտին մէջ , զանի միայն պաշտպանեցէ՛ք :

ՄԱՋԼԸՄԵԱՆ Յ. ԷՅ. Ենորհակալ եմ Ատենապետ էֆ. որ կ'ըզգուշացնէք զիս խնդրէն չը չեղելու . բայց ես չ'եմ չեղիր , նոյն իսկ խնդրոյն վրայ է խօսքս . որովհետեւ ժողովն իր քրէն ետ առնելուն համար էր որ վիճարանութիւնն իր օրինաւոր շրջանէն հեռացաւ , այս ապօրինաւորութեան դէմ բողոքել է իմ միտքս . շնորհ ըրէք ինձի ՚՛ վայրկեան խօսիլ այս մասին : — Ի՞նչ ընելու է մեզի պէս Ազգ մը՝ որ ունի Սահմանադրութիւն մը , երբ նոյն Սահմանադրութիւնը վերաքննութեան կարօտ է , որոյ հիմնական սկզբունքները , գուցէ եւ ոգին , բոլորովին փոխել հարկ ըլլայ , միթէ կարելի՞ է որ Ազգին միլիոնաւոր անհատները եւ նոյն իսկ երեսփոխանութիւնը խմբովին կարենան ընել այդ վերաքննութիւնը . ո՛չ . այլ յանձնաժողով մը միայն կարող է ընել այդ գործը :

Ատենադրութիւններէն կը տեսնենք որ Ընդհանուր ժողովն իր մէջէն ընտրեալ յանձնաժողովի մը յանձնար է Սահմանադրութեան սրբազրութիւնը , նա ալ երեք տարիէն եաքը ծրագիր մը պատրաստեր եւ մեր դիտողութեանց ու քննութեանը բերեր ենթարկեր է . եթէ ըսած ատենադրութիւններս հոս կարողացվին , այն տեսն հարկ չը մնար Պէկեան էֆ.ին ընդերկար խօսիլ այս մասին : Ընդհանուր ժողովը բնականաբար պարտաւոր է իւր Յանձնաժողովոյն բերած ծրագիրը քննելու՝ առանց ապօրինաւորութիւն մը գործած համարվելու , ի՞նչ կ'ըսեմ . ընդհակառակը՝ առանց քննութեան մերժելն է ապօրինաւորութիւն , եթէ ապօրինաւոր բան մը կայ արդէն գործված , այն ալ անցեալ նիստին եղած քրէարկութիւնն է . եթէ այսպէս շարունակ փոփոխութեան ենթարկենք մեր որոշումները , կարելի չ'է գործ մը տեսնել : Ուստի կ'առաջարկեմ որ Յանձնաժողովոյն պատրաստած ծրագրին վրայ անմիջապէս սկսինք մեր քննութիւնն ու գիտողութիւններնիս իրաւունք չ'առնին ըսողները՝ թէ այս ծրագիրը ճնշման արդիւնք է , թէ անի միապետութիւն , պապականութիւն կամ ուրիշ չը գիտեմ ինչ կը հոտի . ես ասոնց եւ ո՛չ մէկը չ'եմ տեսներ . թէ եւ ըլլայ գուցէ ըստ ոմանց , ի՞նչպէս կրնանք առանց քննութեան վճռել ընդդէմ ամենայն բանականութեան եւ իրաւանց . քննենք ո՞ր կէտերուն մէջ են այդ կասկածները , եւ տեսնողները մեզի ալ թո՛ղ ցոյց տան . ինչո՞ւ քննութեան ասպարէզէն փախչելու կը ջանան : Եթէ անոր

մէջ գլխաւոր տակաւ մը կայ, ա՛յն ալ ինչպէս Պէկեան էֆ. ըսաւ, պատժական օրէնք մը չ'ունենալն է իր մէջ :

ՊԵՂԵԱՆ Ք. ԷՖ. — Մեր ընդգիծմանսօրից ըսածներէն յաւօք սրտի կը դիտեմ որ իմ խօսքերս լաւ չ'են հասկըցած . բարեբախտաբար խօսքերս դրի առնված ըլլալով փոխվելու կտակած չը կայ . ես ընաւ չ'ըսի թէ Սահմանադրութեան վերաքննութեան պէտք չը կայ, այլ թէ Ազգը անոր պէտքը չ'է տեսած . եւ երբ ազգովին որոշվի այն, գործադրութեան մէջ եղած Սահմանադրութեան վրայ պէտք է որ կատարվի : 1865 թուականին վերջերը Ընդհանուր ժողովն իր մեծագոյն մասին որոշումներ հերքած է վերաքննութեան առաջարկութիւնը . բայց ետքը ոմանք Բ. Գրան հրամանագրով հարկադրեալ են զԱզգը վերաքննութիւնն ընդունելու : այս հարկադրական պարագային առթիւ Ընդհանուր ժողովը Վերաքննիչ Յանձնախումբ մը ընտրեալ է, բայց նոյն օրվան որոշումը ազատութեամբ չ'է ըրած, նոյն օրը բարձրագոյն հրամանի մը բացարձակ պահանջմամբ՝ օրինաց տրամադրութեան հակառակ որոշում ընելու հարկադրած է . ինչպէս նաեւ . նոյն օրը միեւնոյն հրամանագրին պահանջումը յրացընելու համար հարկադրվոր է մինչեւ իսկ Բ. Գրան կողմէ կարգված Խառն ժողովին համար վստահութեան քրէտալու . աօի Ընդհանուր ժողովին ազատ որոշումը չ'է, այլ ճնշմամբ տուած է . ըսի եւ նորէն կ'ըսեմ թէ Ազգը վերաքննութեան պէտք չ'էր տեսած . ես ընաւ գիտաւորութիւնն չ'ունիմ դժբաղդ անցքեր յուղելու, ոչ ալ ջրհեղեղի պատմութիւնն ընելու . իմ նպատակս յիշեցնել է ժողովին թէ վերաքննութեան պէտքը ազգովին ընդունված եւ որոշված չ'է, թէ քանի որ Սահմանադրութիւն մը ունինք ի ձեռնին, պէտք է անոր տրամադրութեանց հետեւինք եւ ճիշդ այն կերպով վարվինք վերաքննութեան խնդրոյն մէջ, ինչպէս որ ցուցած է Սահմանադրութիւնը : Սահմանադրութիւնը կ'ըսէ որ վարչութեան ճիւղերէն 20 հոգիէ բաղկացեալ Յանձնաժողով մը պէտք է կազմվի վերաքննութեան համար . ինչ է ասոր պատճառը . փորձառութեան վերայ վերաքննութիւնը կատարել . միայն 2-3 տարի գործադրված Սահմանադրութեան մը վերաքննութեան պէտքը ե՛րբ զգաց Ազգը : Օրինաւորութեան հարկը կը պահանջէ հերքել այն ծրարադրը որ մասնաւոր անձանց զբոսան արգասիքն է, որոնք Բ. Գուռը խաբելով թէ Ազգը Սահմանադրութեան վերաքննութիւնը կ'ուզէ,

յանձնաժողով մը ընտրել տուին Բ. Գրան եւ վերաքննեալ ծրագիր մը բերին Ազգին :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ժողովը որոշում մ'ըրեր է որ եւ է պատճառաւ, պէտք է որ յարգըվի . իբրեւ ատենապետ իմ պարտքս է յարգել տալ ժողովոյն որոշումները, եւ չը թողուլ որ ժամանակ անցնելէ ետքը մէջ մէկ պատճառանօք փոփոխվին : Չեմ կրնար ներել նաեւ որ ըսվի թէ ժողովը ճնշման տակ գործած է . Ժողովը կրնար ժամանակին՝ եթէ ճնշման տակ էր՝ բողոքել, եւ թերեւս դուք չ'էք գիտէր, հարկ կ'ըլլայ ինծի յիշեցնել որ Ընդհանուր ժողովն ինք ընտրած է Վերաքննիչ Յանձնախումբը եւ այս ծրագիրը պատրաստել տուած է . Բ. Գուռը տարի մը անցնելէն ետքը զրկած է իր ծրագիրը : Բողոք մ'ընել կ'ուզէք եւ զօնի անազան կերպով . աօի մեր երեւակայութեան, մեր մտածման մէջ անգամ կարելի չ'է ընդունիլ, ինչո՞ւ կը պնդէք ատոր վրայ :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ — Նախնթաց նիստերուն քանիցս անգամ Ատենապետ էֆ. ի առաջարկութեամբ որոշված էր որ խնդրէն դուրս վիճարանութիւն չ'ըլլայ, եւ ժողովին որոշումնք ետ չ'առնվին . կը ցաւ իմ որ վերստին երկար եւ աւելորդ վիճարանութեանց տեղի կը տրվի եւ որոշեալ խնդիր մը ետ դարձնելու ճիգեր կը թափվին . պատուոյ զգացման զէմ կը համարիմ այս բանս . ժողովը մեծ անկարգութիւն մը գործած կ'ըլլայ իր որոշումնքն ետ առնելով . արդէն պատրաստված ծրագիրը քննութեան ենթարկելու որոշում ըրած է, հիմայ կ'երեւնայ թէ պիտի փոխէ իր առաջին որոշումը եւ ուրիշ կերպ վերաքննութիւն պիտի սկսի . ասանկով վերաքննութեան վերջը չը պիտի կրնանք առնուլ : Յանձնախումբին ծրագիրը ճնշման արդիւնք է ըսողներ կան, եւ կ'առաջարկեն որ անի ետ ձգվի . շա՛տ լաւ . ուրեմն քննենք եւ ճնշման արդիւնքներն ազացուցնենք եթէ կան, եւ այնպէս մերժենք այն ճնշեալ յօդուածները :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. —

Ատենապետ էֆ. կ'ազգարարէ Գիւանին՝ նրկատուութեան չ'առնուլ Գրիտոստուր էֆ. ին խօսքերը, որոնք խնդրէն դուրս են, եւ չ'արձանագրել զանոնք . ինչպէս նաեւ ամէն այն երեսփոխանաց խօսքերը, որք առանց Գիւանէն խօսք առնելու կը խօսին :

Գրիտոստուր էֆ. կը բողոքէ այս մասին ըսելով թէ խնդրէն շեղող ուրիշ երեսփոխանաց խօսքերն ալ չ'արձանագրել պէտք է ին :

ԻՌԹԻՒՃԵԱՆ Կ. ԷՖ. — Նախ՝ Պէկեան էֆ. ի մէկ սխալը ուղղել հարկ կը համարիմ . ինք կը պնդէ որ Ընդհանուր ժողովը երբէք վերաքննութեան պէտք տեսած չ'էր, երբ Սահմանադրութիւնը վերաքննութեան ենթարկվեցաւ . ընդհակառակն 1865 թուականի հոկտեմբերին մէջ գումարված նիստը խմբովին ճանչած է վերաքննութեան պէտքը . նոյն նիստին ատենադրութիւնը կրնայ վկայել այս բանիս . միայն մէկ քանինք անմիջապէս վերաքննութիւն կը պահանջէին, իսկ մեծագոյն մասը վերաքննութիւնն իր պայմանեալ ժամանակին պահել հարկ կը դատէր . ըսել է թէ Ընդհանուր ժողովը վերաքննութեան հարկը ճանչեց բայց չ'ուզեց ժամանակէն առաջ սկսիլ :

Երկրորդ՝ Ատենապետ էֆ. ասկէ առաջ պարտք դրաւ ժողովականաց վրայ որ որոշեալ խնդրոց վրայ չը վերադառնան, եւ արգելեց բացված խնդրէն դուրս վիճարանութիւն ընելը . գործութեամբ կ'ընդունինք իր այս պատուէրը, սակայն փափաքելի է որ ինք անոր վրայ հաստատ կենայ . անցեալ նիստին ալ կ'ըսէր թէ խնդրէն դուրս խօսք չ'եմ ընդունիր, բայց ետքը քրէտի գնելու զիջաւ : Ասոր համար ինչպէս Երեմիա Սրբազանն ըսաւ արդէն

Ատենապետ էֆ. ընդմիջեց խնդրէն դուրս ելնելուն համար, եւ կրկնեց որ այսուհետեւ եւ ոչ մէկուն թոյլ պիտի տայ խնդրէն դուրս խօսելու : Եւ յաւելցուց թէ արդէն կարգն եկած է խնդիրը քրէտի գնելու, որոյ վրայ բաւական վիճվեցաւ, եւ եթէ դեռ խօսիլ ուզողներ կան, պէտք է իրենց կարծիքը յայտնեն սա՛ կէտին վրայ թէ՛ վերաքննութիւնը ո՞ր տեսակէն սկսելու է, եւ այս կէտէն չը շեղին :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ . — Նորէն դիտել կուտամ որ այդ խնդիրն անգամ մը քրէտի դրված լուծված է, նորէն քրէտի գնելու հարկ չը կայ :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Երկու առարկութիւն կայ դէմներնս, մէկը՝ Պէկեան էֆ. ի կողմէն որ բացատրել ուզեց թէ Վերաքննիչ Յանձնախումբին ծրագիրը պղտոր աղբիւրէ եկած եւ ճնշված

ման արգիւնք ըլլալուն պէտք է մերժել՝ մինչեւ իսկ առանց քննութեան, եւ վերաքննութիւնը արդի Սահմանադրութեան վրայ կատարել . միւսը՝ իփէկճեան էֆ. ի կողմէն որ միեւնոյն առաջարկութիւնը կրկնեց, միշտ առանց վաստ մը ցուցնելու :

Ես պիտի ջանամ հաստատել որ Վերաքննիչ Յանձնախումբը ո՛չ ճնշման տակ ընտրվեցաւ եւ ո՛չ ճնշման տակ գործեց . երեսփոխաններէն ոմանք Ընդհանուր ժողովոյ մէջ Սահմանադրութեան վերաքննութիւնն առաջարկել ուզեցին, Ընդհանուր ժողովն ալ օրինադրեալ պայմանաւ ժամը չը հասած տեսնելով անոնց առաջարկանքը մերժեց . ասոնք՝ իբր թէ Ընդհանուր ժողովը բարձրագոյն հրամանի մը դէմ չը վարված ըլլալու համար էր որ կը վարանէին վերաքննութիւնն ընելու, ուստի ըստ իրենց կարծեաց Ազգին ծառայութիւն մը ընելու մտօք՝ Ընդհանուր ժողովին ձեռքերը կապող հրամանը ուրիշ չը բամանաւ մը ջրելու եւ Ընդհանուր ժողովին ձեռքերը բանալու խորհուրդը ծնան ու գործադրեցին, այն խղճի հանդարտութեամբ՝ որպէս թէ ոչ թէ իրաւունք կամ սկզբունք մը զոհված, այլ երկու տարվան միջոց վաստկած էին :

Բայց Ազգին առջեւ խնդիրն այնպէս չ'էր օրէնքն էր որ կը պաշտպանէին երեսփոխանք, եւ գիտէին թէ օրէնքը զայն հաստատող եւ գործադրութիւնը հրամայող մարմինն ալ մեծ էր . հրամանի չ'էր որ կը հնազանդէին, այլ օրէնքի . ուստի օրէնքը մասնաւոր հրամանի կարգ անցընողներուն դէմ իրաւամբ զայրացան, ու Ազգին ծառայութիւն կարծվածը՝ Ազգին ամենամեծ շարիք մը եղաւ . հետեւաբար այդ հրամանին հետեւանքը՝ որ էր Բ. Գրան Վերաքննիչ Յանձնաժողովը՝ չ'ունեցաւ այն համարումն Ազգին առջեւ, որու ընտրութեան հեղինակները ունենալ կը յուսային :

Բ. Գրան Յանձնաժողովն իր գործը լմնցուց եւ վերաքննած Սահմանադրութիւնը հրամանագրով մը Պատրիարքարան հաղորդվեցաւ .

Բայց դիտէ՛ք ի՛նչ էր նոյն հրամանագրին իմաստը . — Բ. Գրան ծրագիրը յանձնել Ազգէն ընտրված Յանձնախումբի մը՝ որ լրակատար արտօնութեամբ զանի քննէ եւ առանց Ընդհանուր ժողովին բերելու Բ. Գրան վաւերացմանը տայ : Սակայն Ընդհանուր ժողովն այնպէս չ'որոշեց . ուղեց որ սպագրութեամբ հաղորդվի բոլոր երեսփոխանաց, դէմ կեցան ասոր օսաստիկ կերպով երկու նիստ . բայց յետոյ սպագրութեամբ

հաղորդվեցաւ բոլոր երեսփոխաններուն՝ որ ամեն ոք կարենայ աղատօրէն իր քննութիւնն ու գիտօղութիւնն ընել . ետքը Յանձնախումբ մը ընտրեց, ու պաշտօն տուաւ անոր որ իր պատրաստելու ծրագիրը Ընդհանուր ժողովին բերէ ուղղակի :

Այս է միթէ Յանձնախումբին ճշմամբ ընտրված ըլլալը, որուն տրված պաշտօնը եկած հրամանագրին հակառակն է :

Ընդհանուր ժողովին ճշուժէ ազատ ըլլալուն մէկ ուրիշ ապացոյցն ալ ըսենք :

Ընդհանուր ժողովը Սահմանադրութեան վերաքննութեան վերջին վիճաբանութիւնը իր վերայ առնելու որոշումը տալու միջոցին եւ յետոյ՝ երեսփոխանաց թիւը հետըզհետէ 32ի հասած էր . այս միջոցին էր որ Երեսփոխանական ժողովոյն վերանորոգման խնդիրը ծագեցաւ . ասոր ալ խստիւ դէմ կեցողներ դառնացան, եւ իրենց միակ նպատակն էր՝ Սահմանադրութեան վերաքննութիւնը այն թիւով թուով կազմեալ Ընդհանուր ժողովէն անցընել . մինչեւ իսկ յայտնապէս ըսողներ կոչան թէ՛ եթէ վերանորոգութիւնը որոշվի, ո՛ր գիտէ ի՞նչ տեսակ մարդիկ պիտի ընտրվին եւ Սահմանադրութեան Ընդհանուր ժողովէն անցնելու միջոցին ի՞նչ դժուարութիւններ պիտի յարուցեն . բայց Ընդհանուր ժողովը բարձրաձայն որոշեց որ՝ երեսփոխանութիւնը վերանորոգվի : Եւ ահա վերանորոգվեցաւ ու գուշակված դժուարութեանց ժամերն հասանք :

Այս ալ ապացոյց չէ՞ որ Ընդհանուր ժողովը վերաքննութեան խնդրոյն մէջ ընաւ ճշում չէ ունեցած . իսկ եթէ Յանձնաժողովը ճշման տակ գործեց կ'ըսէք, անոր ատենագրութիւնները վկայ են թէ՛ ճշումը Աերաքննիչ Յանձնախումբէն ներս ընաւ մտած չէ, եւ գործն իսկ կ'ապացուցանէ թէ՛ ազատ խորհրդածութեան արդիւնք է :

Այս ծրագրին պատրաստութեանը համար ապօրինի է ըսողներ ալ կան, որք կ'առաջարկեն գիմել Սահմանադրութեան վերաքննութեան յօդուածին (Յօդ 99) : Հոս կանոց կ'առնու՞մ եւ կը մըտածեմ թէ՛ ինչպէս ընելու է ասոնց ըսած վախճանին համեմատ համար : Նախ օրինաւոր վարչութիւններն պէտք է կազմել, զի չ'ունինք ըստ Սահմանադրութեան կրօնական ու ֆաղաքական ժողովներ, ո՛չ միւս Խորհուրդներ կամ Հոգաբարձութիւններ : Եթէ այսպէս պէտք է ընենք կ'ըսեն, ասի վերաքննութիւնը չ'ընել ըսել ըլլալէն զատ, նոր քայլ առնելու վրայ ե-

ղած վարչութիւնն ալ յանուն վերաքննութեան անորոժութեան դատապարտել ըսել է :

Մաս մ'ալ կայ որ, բուն աղագային հեղինակութեան մը արդիւնքին վրայ ընել կ'ուզեն վերաքննութիւնը, եւ Աերաքննիչ Յանձնախումբին ծրագիրը ասոր հակառակը կը դանեն :

Խղճովս կ'ըսեմ որ խնդիրը ճիշդ ասոր հակառակն է : Աերաքննիչ Յանձնախումբին ծրագիրը բուն աղագային գործ մըն է . իսկ գործադրութեան մէջ գտված Սահմանադրութիւնը՝ որու վրայ ընել կ'ուզեն վերաքննութիւնը՝ բուն իսկ պետական հարուածի մը արդիւնք է : Աղագային խնդիր մը ծագելը՝ առիթ տուաւ ոմանց հարուածել այն Սահմանադրութիւնը՝ որ աղագային էր եւ 1860ին հաստատված, եւ Բ. Գրան յանձնախումբի մը շինած Սահմանադրութիւնը հաստատել : Այո՛, թէպէտեւ այդ ալ աղագային յանձնաժողովի մը սրբադրութիւնէ անցաւ, բայց ո գիտէ անոր քանի՛ գիտօղութիւնները մերձ ժրվեցան թէ Բ. Գրան Յանձնաժողովէն եւ թէ Բ. Գոնէն, զի անոր գործադրութիւնը հրամայող գրոյն մէջ յիշված է թէ՛ մէկ քանի քաղաքական սրբադրութիւններ տեղի ունեցած են . ո՛րերնիդ գիտէք թէ ի՞նչ էին սրբադրվածները . ո՛ւր է այն աղագային Յանձնաժողովին տեղեկագիրը . ո՛ւր է Ընդհանուր ժողովոյ վիճաբանութիւնը : Ահա այսպիսի կերպով պատրաստված ու վաւերացած է այն Սահմանադրութիւնը՝ զոր կ'ուզէք նախամեծար համարել ձեզմէ ընտրեալ Յանձնախումբին ձեզ բերած ծրագրէն : Աերացուր ասոր վրայէն կայսերական հրամանը՝ որու ամենքնիս հնազանդելու պարտական ենք, այն ատեն կը տեսնես թէ անոր գոյնն ի՞նչ է :

Ամեն օրինաւորութիւն ապօրինաւորութեամբ կ'ըսվի ընդհանրապէս . ուստի թէ եւ ներկայ վերաքննութիւնն ալ ապօրինաւորութեամբ ըսկըսած ըլլայ՝ օրինաւորութեան մէջ մտած է . ձեր քրէ-էոյն ընտրեալ Յանձնախումբի մը ձեռք քննված եւ ձեր ատենը եկած եւ վիճաբանութիւնն սկսած է . ըսել է վերաքննութիւնն Ընդհանուր ժողովով որոշված է եւ գործադրութիւնն սկսած . ետ դառնալ ասկից նորէն՝ ըսելով թէ ճշման տակ ընտրվեցաւ, ճշման տակ գործեց, Ընդհանուր ժողովոյ պատուոյն եւ ճշմարտութեան դէմ մեղանչել է :

ՓՕՓՕԱԶԵԱՆ Ս. ԷՑ. — (Արեւուշէր էֆէն) Երկու անգամ խօսեցաք այժմ, եւ երկու անգամին ալ մարտ 20ի պատահարին վրայ ակնարկութիւն ըրիք, արդեօք արձանագրվեցա՞ն . եթէ պիտի արձանագրվին, գիտօղու-

թիւն ունիմ երկու բառի վրայ, կ'ուզեմ որ անոց հետ արձանագրվին : Առաջին անգամի խօսքերնուդ մէջ մարտ 20ի պատահարին նրկատմամբ է քոյ Բողոքը բառը գործածեցիք . ինքնիրեն սկսայ մտածել թէ արդեօք Բեդէ Բը-ձէլի նշանակութեամբ գործածեցիք թէ Բը-ձէլի : Երկրորդ անգամին երբ Բողոքին է քոյ Բողոքը ըսիք, ալ ասպիտակ եղայ թէ Բը-ձէլու նշանակութեամբ կը գործածէք . ուստի պարտաւորեցայ այժմ գիտօղութիւն ընել թէ, նախորդ նիստին մէջ Երեսփոխանութիւնը մարտ 20ի պետական հարուածին խնդիրը ոչ թէ Բը-ձէլու, այլ Բեդէ Բը-ձէլու քրէ տուաւ, այսինքն ոչ ոք չ'ուզէր . կրնայ ըլլալ որ մէկ տարիէն, ինչ տարիէն, ասս տարիէն՝ օր մը ուղէ յուզել . այդ խնդիրը մեզի համար տեսակ մը Աւուր-ճոյն խնդիր է :

(Հոս Բեդէ Բը-ձէլու նշանակը)

Ժողովը քառօրդ մը դադար առնելէ ետքը՝ վերստին ատենը կը բացվի :



ՊԵՏԱՆ Թ. ԷՑ. — Գո՛հ եմ որ Օգոստէն էֆ. իմ խօսքերուս էական կէտերուն պատասխանեց . կ'ըսէ թէ, «Աերաքննիչ Յանձնախումբին ծրագիրը ճշման արդիւնք չ'է, ըստ որում Յանձնախումբ մը Ընդհանուր ժողովէն ընտրված ըլլալով, ճշման ենթարկելու հարկին մէջ չ'էր, եւ թէ ինքն իր վերաքննութիւնը գործադրութեան մէջ եղած Սահմանադրութեան վրայ կատարած է. » Օգոստէն էֆ. այս խօսքերը հերքելու համար բաւական կը համարիմ ըսել թէ՛ մինչդեռ վերաքննութիւնը աղագային Սահմանադրութեան վրայ պիտի կատարվէր վերաքննութեան օրինաց համեմատ, ասոր հակառակ՝ Բ. Գրան Յանձնախումբին հարած մէկ նոր ծրագրին վրայ կատարվիլը, ըստականէն աւելի ապացոյց է ներկայ ծրագրին ապօրինաւոր, հետեւաբար ճշման արդիւնք եղած ըլլալուն . բայց թէ Աերաքննիչ Յանձնախումբը Բ. Գրան ծրագրին վրայ կատարած է իր վերաքննութիւնը, թէ Աղագային Սահմանադրութեան վրայ . ասոր համար թէ եւ 1868 ապրիլ 12ի Ընդհանուր ժողովոյ արձանագրութիւնը բաւական իսկ է, որ կը հաստատէ Յանձնախումբին քննութեանը յանձնըվածը՝ ըստ բարձրագոյն հրամանի՝ Բ. Գրան ծրագրին եղած ըլլալը, ասկայն հարկ կը համարիմ Յանձնախումբին անգամ Ռուսիսեան էֆ. ի եւ նոյն իսկ Օգոստէն էֆ. ի խօսքերովն ալ զնոյնն հաստատել . ահաւասիկ Ռուսիսեան էֆ. կ'ըսէ .

«Բ. Գոնէն սահմանադրութեան ծրագիր մը եկած է Աղագային ժողովէն չ'ընտրեալ յանձնախումբի մը ձեռք խմբագրեալ . Ընդհանուր ժողովը զանի ինք քննելը կարելի չը գտնելով, յանձնել է իրմէ ընտրեալ յատուկ յանձնախումբի մը որ քննէ եւ իւր քննութեան արդիւնքը տեղեկագրէ ժողովին . ըսել է թէ այս յանձնախումբին ծրագրին է վերաքննելին, քանզի անոր բերածը Ընդհանուր ժողովինն է եւ ոչ ուրիշին. » (Ատենագրութիւն Ընդհ. ժողովոյ նիստ 2. երես 87) : Օգոստէն էֆ. ալ գրեթէ այս կ'ըսէ, ահաւասիկ . «երբ ասիէ առաջ Բ. Գրան Յանձնախումբին շինած ծրագրին Աղագային յանձնըվեցաւ եւ ըսվեցաւ որ նոյնը Բ. Գրան վերադառնայ վաւերացման համար, Ընդհանուր ժողովն ուզեց որ իր մէջէն կարգեալ յանձնախումբի մը յանձնէ զայն, որ քննէ եւ նոր ծրագիր մը բերէ . եւ ահա այս է եկած ծրագիրը : (Ատենագրութիւն Ընդհ. ժողովոյ նիստ փ. երես 249) : Ահա՛ բացայայտ կը տեսի թէ Յանձնախումբին քննութեանը յանձնվածը Բ. Գրան ծրագրին էր, մինչդեռ մենք վերաքննութիւնը գործադրութեան մէջ եղած Սահմանադրութեան վրայ կատարելով, անոր թերութիւնները միայն պիտի սրբադրէինք . արդ՝ քանի որ ներկայ ծրագիրը այսպէս ապօրինաւոր ու ճշման արդիւնք է, մեզի համար ընդունելի չ'է : Գալով Օգոստէն էֆ. ի այն առարկութեան թէ՛ Սահմանադրութեան վերաքննութեան օրէնքը գործադրելի չ'էր եւ չ'է, կը պատասխանեմ թէ՛ ակնարկած օրէնքը գործադրելի էր եւ է, կրօնական ու ֆաղաքական ժողովներ . ու Տեսուչ Խորհուրդներ կային ու կան . միայն Ա. անորէից Խորհուրդ չ'ունեցաւ Աղագ, այն ալ հոգ չ'է : Իսկ գործադրութեան մէջ եղած Սահմանադրութեան ալ ճշմամբ եւ աւելի եւս ապօրինաւորութեամբ ծագում առած ըլլալու մասին ըրած առարկութեանը գալով, կը փութամ պատասխանել թէ՛ այն ատեն օրէնք մը չ'ունէինք, որով ապահովեալ ըլլար մեր իրաւունքները . բայց քանի որ այսօր ունինք Սահմանադրութիւն մը, չ'ենք կրնար զոնել անոր առանձնաշնորհութիւնները :

Գալով Նւթիւճեան էֆ. ի պահ մ'առաջ ըրած առարկութեան թէ, « Ընդհանուր ժողովը 1865 հոկտեմբեր 22ին, վերաքննութեան պէտքը որոշած, ասկայն անոր պայմանաժամ ըստ օրինի լրացած չ'ըլլալուն համար, պայմանաժամին սպասել հարկ տեսած ըլլալուն ... » կը պատասխանեմ թէ՛ իր ակնարկած ժողովոյն նոյն

Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.

Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.



ԳԻՆ Զ ՂՐՈՒՇ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՄՆՏՈՒԿԻՆ

Կը ծախսի ի Դիւանատան Պատրիարքարանի ի Ղարաթխա ,
ևւ կը գտի ամեն գրախաճառաց քով և Նկէ զէջէաց բանկայնէ ըր :